

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՂԱՍՏ ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ ՀԱՐՑԸ

Ռ. ԻՇԵԱՆՅԱՆ

Շումերերեն (սումերերեն) լեզվի տարածույթը (առեալը) եղել է Միջագետքը¹, Այն խոսակցական լեզու է եղել մ.թ.ա. առնվազն 5-րդ հազարամյակից մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջը (կամ 2-րդ հազարամյակի սկզբները): Գրավոր առավել վաղ հուշարձանները վերաբերում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջին 3-րդի սկզբներին: Նախապես շումերերենը խոսվել է ամբողջ Միջագետքի տարածքում, ապա 3-րդ հազարամյակի կեսերից՝ գերազանցապես հարավում:

Հավանաբար, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսում Միջագետքում արքադացիների քանակական աճի հետևանքով շումերերեն աստիճանաբար ուժացվել են, մնացածներն առավելապես կենտրոնացել են Միջագետքի հարավում, ապա մինչև մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջը լիովին անցել են խոսակցական արքադերենին ու ձուլվել՝ դառնալով արքադացի: Շումերերենն այլևս չի խոսվել, բայց Միջագետքում գործածվել է գրավոր խոսքում որպես մեռած, կաղապարային լեզու մինչև մ.թ.ա. 2-րդ դարը: Շումերերեն շատ բառեր անցել են արքադերենին: Շումերերենի ազգակցությունը որևէ լեզվի հետ պարզված չէ:

Շումերները մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից գործածել են պատկերագիր, 3-րդի սկզբներից՝ սեպագիր, որ և տարածվել է Արևմտյան Ասիայի մի շարք հին երկրներում, այդ թվում Արարատի թագավորության մեջ:

Արքադերենի (ասուրաբաբելերենի) տարածույթը նույնպես եղել է Միջագետքը: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից այն խոսվել է Միջագետքի գրեթե ամբողջ տարածքում՝ մինչև մ.թ.ա. 7-րդ դարը: Այդ ժամանակ արքադացիները լիովին կորցնելով իրենց լեզուն և որդեգրելով խոսակցական արամեերենը (կամ քաղդեերենը, ասորերենը)՝ դարձան արամեացի (քաղդեացի): Այդպիսով, Միջագետքը արամեացիացեց: Ավելի ուշ Միջագետքում արամեերենին փոխարինեց արաբերենը:

Եվ այսպես, մոտ 5 հազարամյակի ընթացքում Միջագետքը լեզվական իր հիմնական պատկերի տեսակետից փոփոխվել է հետևյալ հաջորդականությամբ՝ շումերերեն, արքադերեն, արամեերեն, արաբերեն: Անշուշտ, սա չի

¹ Շումերերենի վերաբերյալ ստորև տրված տեղեկանքների հիմքը տե՛ս հետևյալ հրատարակություններում. Языки Азии и Африки, т. 3, М., 1979, с. 7—36, Переднеазиатский этнографический сборник, В. 1, М., 1958 с. 8—13, С. Кремер. История начинается в Шумере, М., 1965, А. Л. Оппенхейм, Древняя Месопотамия, М., 1980, БСЭ, т. 29, М., 1978, Историческая энциклопедия, т. 16, 1976, 202, т. 8, в., 1982, Б. М. Гранде, Введение в сравнительное изучение семитских языков, М., 1972, стр. 312—332 (տե՛ս նաև ստորև):

նշանակում, որ շումերական շրջանում սեմական երեք մյուս լեզուներն այդ տարածքում չեն խոսվել և կամ, որ առհասարակ ուրիշ լեզուներ այնտեղ չեն եղել (հնում Միջագետքում եղել են նաև խուռիերեն, հնդկաիրանյան լեզուներ, հայերեն և այլն): Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Միջագետքի առավել հայտնի կամ հիմնական չորս լեզուներին:

Հայկական լեռնաշխարհը գտնվում է Միջագետքից հյուսիս: Ավարտվում է Միջագետքի հարթավայրը, սկսվում է Հայկական լեռնաշխարհը²: Այսինքն՝ Միջագետքը և Հայկական լեռնաշխարհը իբրև զուտ աշխարհագրական միավորներ միմյանց հետ շփվում են: Այդ շփման գիծը, մոտ 300 կիլոմետր է:

Համեմատական լեզվաբանության մեջ անցյալ դարից մինչև այժմ անխախտ ընդունված պատկերացումը եղել է այն, որ հայոց լեզուն կամ հայոց լեզվի տարածույթը շփվել է այս չորս լեզուներից միայն վերջին երկուսի՝ արամեերենի և արաբերենի հետ: Այս պատկերացման պատճառը մեկն է. այն, որ իբրև կանխադրույթ ընդունվել է հայոց լեզվի ոչ տեղաբնիկ լինելը: Ըստ այդ կանխադրույթի հայերենը կամ նախահայերենը³ և այն կրողները եկել են Եվրոպայից Փոքր Ասիա և Հայկական լեռնաշխարհ են թափանցել մ.թ.ա. 6-րդ (կամ 7-րդ) դարում: Ըստ այդմ, հայերենը չէր կարող շփվել շումերերենի և աքքադերենի հետ, քանի որ երբ այն իբր մ.թ.ա. 6-րդ դարում թափանցել է Հայկական լեռնաշխարհ, այդ երկու լեզուներն այլևս չէին խոսվում (մեռած էին): Կնշանակի, այդ պատկերացման համաձայն, կենդանի շումերերենից և աքքադերենից չէին կարող բառեր անցնել հայոց լեզվի մեջ:

Այս պատկերացումն, իրոք, կանխադրույթի արժեք է ունեցել հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության հարցերով զբաղվող գրեթե բոլոր հնդեվրոպաբանների, այդ թվում՝ Ֆ. Մյուլլերի, Ա. Մեյերի, Հ. Հյուբշմանի, Հ. Պեդերսենի, Հ. Աճառյանի, Ն. Ադոնցի, է. Բենվենիստի և այլոց համար:

Խոսելով հայերենում այդ հին լեզուների բառերի առկայության մասին, օրինակ, Ն. Ադոնցը գրում էր. «Դա չի նշանակում, անշուշտ, որ փոխառությունը կատարվել է այդ դարաշրջանում (այսինքն այդ լեզուների խոսակցական եղած ժամանակ—Ռ. Ի.): Այս կարգի տարրերը, հավանաբար, թափանցել են հայերենի մեջ հայերի Հայաստան անցնելու ընթացքում և կամ երկիր գալուց հետո ժառանգվել են տեղական հին բնակչությունից»⁴: Բերելով հայերենում եղած աքքադական մի քանի բառեր՝ Ադոնցը գրում է. «Սրանք են այն բառերը, որ գալիս են վաղ հնությունից, որոնք հայերը, մեր կարծիքով, հավաքել են մասամբ Հայաստանը գրավելուց առաջ և մասամբ՝ հետո»⁵: Իսկ հեղինակի դրելով հայերը Հայաստան են մտել մ.թ.ա. 6-րդ դարում, ըստ նրա, նախքան այդ լեռնաշխարհում հայ ու հայերեն չեն եղել⁶:

Հ. Աճառյանն իր հերթին գրում էր. «Այն ժամանակ, երբ Ատորեստանը իր փառքի գագաթնակետն էր ապրում, հայերը (արմենները) դեռ չէին մտած Հայաստան (Խալդիա): Նրանք բնակվում էին դեռ Փոքր Ասիայի միջին

² Բուն Միջագետքի հյուսիս-արևմուտքում ընկած էր, այսպես կոչված, Հայոց Միջագետք՝ հիմնականում հայախոս բնակչությամբ, Մասին և այլ լեռներով: Ընում այդ տարածքը Մեծ Հայքի մասն է կազմել:

³ Հայերեն կամ նախահայերեն միևնույն արժեքն ունեն, տարբերությունը միայն ժամանակային է, այսինքն՝ նախահայերենը պարզապես ավելի վաղ շրջանի հայերենն է: Հնդեվրոպական մայր լեզվի տրոհումից և հայերենի իբրև լեզվական առանձին միավոր երևան գալուց հետո՝ միևնույն է, թե ինչ անուն կտանք այդ միավորին՝ նախահայերեն թե հնագույն հայերեն. դա այն լեզուն է եղել, որը հազարամյակների միջով անցնելով, անընդհատ փոփոխվելով, այսօր հնչում է իբրև հայոց բարբառ կամ գրական հայերեն:

⁴ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 382—383:

⁵ Նույն տեղում, էջ 391:

⁶ Նույն տեղում:

մասերում... Այս պայուսակներն, Ասորեստանցոց ազդեցութիւնը անուղղակի ճանապարհով և փոքր չափով միայն պիտի հասնեն հայերին... Երբ հայերը մտան խալդիա և ժառանգեցին խալդիական հարատւութիւնները, բազմաթիւ խալդերեն փոխառյալ բառերի մեջ ստացան նաև ասորեստանյան բառեր»⁷։

Ը. Աճառյանը շատ էլ համոզված չի եղել հնդեվրոպական նախահայրենիքը Եվրոպայում տեղադրելու, ուստի և հայոց լեզվի եվրոպական տեսակետին, քանի որ նա ունի նաև այսպիսի ասույթ. «Հնդեվրոպացոց նախահայրենիքի տեղը դեռևս ճիշտ չէ որոշված. նա գտնվում էր Եվրոպայի արևելյան մասերից՝ սկսած մինչև Թուրքեստան գտնված տարածութեան մեջ՝ մի որոշ տեղ»⁸։ Բայց Աճառյանը, այնուամենայնիւ, ընդունում էր իր ուսուցիչներին՝ Մեյերի և Հյուբշմանի տեսակետը հնդեվրոպական նախահայրենիքը Եվրոպայում տեղադրելու մասին որպես մի հիմնադրույթ, ավելի ճիշտ՝ կանխադրույթ ու իր լեզվական քննութիւնների ժամանակ անխախտ պահում էր այն։

Գ. Ղափանցյանը, որ հայերենը հնդեվրոպական լեզու չէր համարում, այլ համարում էր խառնածին լեզու⁹, միևնույն է, հայերենում եղած հնդեվրոպական, իր խոսքով ասած, «նստվածքը», այսինքն՝ բաղադրիչը դիտում էր որպես եվրոպոր, իսկ սա եվրոպական կանխադրույթի մի տարրերակն է (հայերենի հնդեվրոպական «նստվածքը» անկասկած է, որ այս լեզվի քերականական և բառապաշարային առանցքն է, բերել այն դրսից, նշանակում է դրսից բերել լեզուն ամբողջութեամբ)։ Գ. Ղափանցյանի տեսակետի համաձայն հայերենի հնդեվրոպական «նստվածքը» լեռնաշխարհ է եկել մ.թ.ա. 7-րդ դարում¹⁰ և, ըստ նրա, անմիջականորեն չի շփվել աքքադերենի ու առավել ևս շումերերենի հետ։ Օրինակ, իր «Ասորա-բաբելական բառեր հայերենում» հոդվածի առթիւ Ղափանցյանը գրում է. «Այս բոլոր նկատառումներով չի կարելի, մեր կարծիքով, հետազոտական այս մեր էքսկուրսը անվանել «Աքքադերենի ազդեցութիւնը հայերենի վրա» (թող թե «սումերերենի ազդեցութիւնը հայերենի վրա»), որովհետև հայերի գոյացման ժամանակ դրանք դադարել էին խոսել իրենց լեզվով, այլալեզու էին դարձել և հայերի հետ անմիջապես հարևան չէին։ Այդ տեսակետից ճիշտ կլինի խոսել ընդհանրապես հայերենի աքքադական բառերի մասին»¹¹ («հայերի գոյացման ժամանակը» Ղափանցյանը համարում է մ.թ.ա. 7—3-րդ դարերը)։ Այսպէ՛ս Քրայսի այս մոտ քսան և հինգ աքքադական բառերից (խոսքը Ը. Աճառյանի հիշատակածների մասին է—Ռ. Ի.), հայերենում կան նույն ծագմամբ և այլ բառեր, որոնք, օրինակ, անցել են պարսիկներին կամ հույներին կամ ասորիներին և ձևափոխվելով սրանցից անցել են և հայերին»¹²։ Կամ՝ շար բառի մասին խոսելով նշում է. «...հայոց այդ շար-ը Միջագետքից անցած պիտի լինի Հայաստանի նախաքննիկներին (խալդերեն և այլն), որոնցից և հայերին»¹³։ Այսպիսի ձևակերպումներ Ղափանցյանը շատ ունի (տե՛ս նաև նրա «Ուրարտուի պատմութիւնը», Ե. 1940, էջ 37)¹⁴։

⁷ Ը. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, մաս 1, Ե., 1940, էջ 195։

⁸ Նույն տեղում, էջ 8։

⁹ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմութիւն, Ե., 1961, էջ 11—33 և այլուր։

¹⁰ Նույն տեղում, էջ 45, 48 և այլուր։

¹¹ «Տեղեկագիր» ՀՄՄՀ ԳԱ, 1945, № 3—4, էջ 7։

¹² Նույն տեղում, էջ 13։

¹³ Նույն տեղում։

¹⁴ Գ. Ղափանցյանը հայոց լեզվի, իր խոսքով ասած, «կազմավորման» ավարտը դնում էր մ.թ.ա. 3-րդ դարում, և ստացված էր, որ դրանից առաջ հայոց լեզու և հայեր չեն եղել (տե՛ս նրա «Հայոց լեզվի պատմութիւն», էջ 33, 48 և այլուր), որը նրա իսկ քննութիւնների ակընհայտորեն հակասում էր Արճասարակ, Գ. Ղափանցյանի առաջնակարգ բառաքննումներին շերտաշնակվում Արևմտյան Ասիայի բոլոր լեզուների մեջ միայն հայերենը խառնածին համա-

Այս ընդհանուր պատկերացման մի արդյունքը եղել է այն, որ հայերենի բառապաշարը չի ուսումնասիրվել շումերերենի և աքքադերենի հետ ունեցած անմիջական շփման որևէ հնարավորության ընդունման հիմքի վրա, հայագիտության տեսանկյունից չեն ուսումնասիրվել շումերերենն ու աքքադերենը, նրանց բառապաշարը: Արդյոք այդ կանխադրույթը չէ՞ պատճառներից մեկն այն իրողության, որ այսօր չունենք որակյալ շումերագետներ և աքքադագետներ:

Եվ այսպես, հայոց լեզվի ու այն կրողների եկվորության կանխադրույթը ահա ավելի քան 100 տարի է, ինչ մերժում է հայերենում աքքադական անմիջական փոխառությունները և մերժում է անգամ մտածելը շումերերենից հայերեն անմիջականորեն անցած բառերի մասին: Հայերենի բառապաշարի պատմական զարգացման ամեն մի ուսումնասիրություն դրվում է այս կանխադրույթի պրոկրուստեսյան մահճի վրա:

Մեր կարծիքով՝ լեզվի կանխադրույթային այդպիսի ուսումնասիրություն արդյունավետ լինել չի կարող: Նախ մեր համոզմամբ եկվորության այդ պատկերացումն՝ իր տարբերակներով, ինքը ապացուցման կարոտ է, այսինքն՝ ճիշտ չէ այն անվերապահորեն իբրև կանխադրույթ ընդունել, ապա՝ այդ տեսակետը զուտ պատմագիտական արժեք ունի և, կարծում ենք, չպետք է միջամտի լեզվական նյութի զուտ լեզվաբանական քննությանը:

Լեզվաբանը, մեր կարծիքով, պետք է լեզվական նյութն ուսումնասիրի՝ մի կողմ դնելով այդ կարգի բոլոր կանխադրույթները և իր եզրակացությունները առարկայորեն բխեցնի նյութից: Այսինքն՝ ձեռնարկելով հայերենի հնագույն փոխառյալ բառերի ուսումնասիրությանը և գնահատմանը՝ լեզվաբանը մի կողմ պետք է դնի եկվորության թե տեղաբնիկ լինելու մասին եղած բոլոր վարկածները և դբադվի բառերի ձևային ու իմաստային բուն համեմատությունամբ, նաև նկատի առնելով քննվող բառ-արմատների առկայությունը կամ չգոյությունը հայերենի և փոխատու լեզվի հետ շփված ալ լեզուներում, ջանա որոշել փոխառության անմիջական թե միջնորդաբար լինելը և այլն: Եթե քննությունը փաստերի քննությամբ ատիպում է մտածելվամ ենթադրել, օրինակ, շումերերենից կամ աքքադերենից անմիջականորեն հայերենին անցած ինչ-ինչ բառերի մասին, ապա դրան որևէ կերպ չպետք է խանգարի վերոհիշյալ կամ մի ուրիշ կանխադրույթ: Ավելին, առարկայորեն ու անաչառ կատարված զուտ լեզվական քննությամբ է, որ պետք է ստուգվի հիշյալ պատկերացման իրոք ճիշտ թե սխալ լինելը և ոչ հակառակը: Այլ խոսքով, եթե լեզվական նյութի զուտ գիտական քննությունը հաստատում է կամ թեկուզ ինչ-որ չափով հավանական է դարձնում ասենք, շումերերենից անմիջականորեն հայերենին անցած ինչ-որ բառերի առկայություն, ապա պատմագիտական բնույթի որևէ վարկած այդ ենթադրությանը խանգարող կանխադրույթ չպետք է դիտվի:

Ուշագրավ է, որ հայոց լեզվի եկվորության հիշյալ վարկածն իբրև կանխադրույթ ընդունող ուսումնասիրողների բերած փաստերը հաճախ հակասության մեջ են մտել այդ կանխադրույթի հետ: Օրինակ, Ն. Ադոնցը աքքադերենի Šalluru բառը համեմատում է հայերեն սալուր-ի հետ¹⁵, ապա բերում է այդ բառի տարբերակներն այլ լեզուներում, աքքադերենին ամենից մոտը՝ ձևով

րելու նրա տեսակետը, որ մի այլ կարգի խանգարիչ կանխադրույթ էր դարձել լեզվաբանի ուսումնասիրությունների համար: Գ. Ղափանցյանի խիստ քննադատությունը Ա. Մեյեի և ուրիշ հնդեվրոպաբանների հասցեին, մեր կարծիքով, հիմք չունեն: Հայերենի, որպես հնդեվրոպական լեզվի, բառապաշարի համեմատական քննման ամենից ավելի հիմնավոր և արդյունավետ մոտեցումը, կարծում ենք, Մեյե-Հյուբշման-Աճառյան ուղղությունն է (չհաշված հ. Ե. Նախահայերենի մտացածին տեղադրումը)՝ է. Աղայանի և Գ. Զահուկյանի լրացումներով:

¹⁵ Ն. Ադոնց, նույն տեղում, էջ 388—387:

և իմաստով հայերենն է: Ադոնցը չի նշում այդ բառի առկայությունը այսպես կոչված, ուրարտերենում կամ խալդերենում, որ մենք կոչում ենք նորխուռիերեն¹⁶, քանի որ այդպիսին չկա այդ լեզվում: Ամբողջ քննությունից հավանական է դառնում, որ սալուր-ը հայերենում պետք է անմիջական փոխառություն լինի աքքադերենից: Սակայն Ադոնցը այդ չի ասում, քանի որ դա չէր համապատասխանի կանխադրություն: Նույնն է աքքադական kumru բառը¹⁷, որ աղերավում է հայերեն բուրմ-ի հետ: Ադոնցը համեմատություններով՝ հիմնավոր նշում է, որ այն ասորերենից կամ արամեերենից փոխառված չի կարող լինել: Ավելացնենք, որ խուռիերենում և նորխուռիերենում առհասարակ չկա նման բառ: Անաչառ գիտնականն ամենահավանականը պետք է համարեր անմիջական փոխառությունը աքքադերենից: Բայց Ադոնցը հետևողականորեն հավատարիմ մնալով կանխադրություն, խուսափում է անզամ նման ամենաթեական ենթադրությունն անելուց:

Մի շարք դեպքերում նույն կերպ է վարվում Հ. Աճառյանը: Օրինակ՝ աքքադական birtu «բերդ, ամրոց» բառը աղերսվում է հայերեն նույնիմաստ բերդ բառի հետ¹⁸, որի որևէ տարբերակը չկա շրջապատի հին լեզուներում, այդ թվում խուռիերենում ու նորխուռիերենում, բայց Աճառյանը հավատարիմ մնալով կանխադրություն՝ գրում է, որ պետք է ենթադրել, թե այդ բառն ասորերենից (աքքադերենից) անցել է խալդերենին (նորխուռիերենին) ու նոր սրանից հայերենին: Եթե չլիներ կանխադրությունը, միակ հավանական ենթադրությունը կլիներ այն, որ բառն անմիջականորեն աքքադերենից անցել է հայերենին: Նույնը վերաբերում է Հ. Աճառյանի հիշատակած հայերեն փոխառյալ այնպիսի բառերին, ինչպես կմախ(f)—շումերենում kimah «մահ, գերեզման», աքքադերենում gimahhu, kimahhu «ղագաղ», կնիֆ—աքքադերենում kunukku «կնիք, կնքված», կշիռ—շումերերենում gušur «ձող, լծակ», աքքադերենում giširnu «կշեռք, լծակ», հալալ—աքքադ. halāpu «ծածկել», մաֆառ(hl)—աքքադ. mahāru «դիմադրել, մրցել» և այլն¹⁹:

Հայերեն փոխառյալ այն բառերը, որոնք կան և՛ շումերերենում, և՛ աքքադերենում, Աճառյանը անպայման համարում է աքքադական փոխառություն, այն էլ միջնորդավոր, թեև ուզ հայերեն բառը ըստ իմաստի ու ձևի ավելի ճիշտ կլիներ բխեցնել անմիջապես շումերերենից: Օրինակ, այդպիսին է հայերեն վերոհիշյալ կմախֆ բառը (համեմատել վերը բերված շումերերեն և աքքադերեն տարբերակների հետ): Կամ, օրինակ, անագ բառը. հմմտ. շում. anag, աքք. anaku և այլն:

«Արմատական բառարանում» մի շարք արմատների բացատրությունների մեջ Աճառյանը հիշատակում է Սաքրզյանի և Կարստի առաջարկները՝ փոխառյալ այս կամ այն արմատն առնել շումերերեն համապատասխան բառի հետ. այդ բոլոր առաջարկները Աճառյանը մերժում է և համարելով ամենաանհավանական, սովորաբար նշում մյուս տեղեկանքների վերջում:

¹⁶ Մենք անհամոզիչ չենք համարում որոշ լեզվաբանների, այդ թվում Ի. Մ. Գյակոնովի բերած փաստերն ու փաստարկներն այն բանի օգտին, որ խալդերեն կամ ուրարտերեն պայմանական ու անճիշտ անուններով կոչված լեզուն խուռիերենի տարբերակն է: Ավելի ճիշտ՝ եթե խուռիերեն կոչվում է այդ լեզվի հին վիճակը՝ մ.թ.ա. 3—2-րդ հազարամյակներից հայտնի, ապա մ.թ.ա. 9—6-րդ դարերում պահպանվածը կարելի է առաջմ պայմանականորեն կոչել նորխուռիերեն, մինչև որ գտնվի ավելի ճշգրիտ անվանում:

¹⁷ Ն. Ադոնց, նույն տեղում, էջ 390—391:

¹⁸ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 1, էջ 195: Առաջարկել է Յ. Կարստը (տե՛ս «Յուրարձան: Գրական ժողովածո», Վիեննա, 1911, էջ 399):

¹⁹ Նույն տեղում, էջ 196—198 (առաջարկները մեծ մասամբ Յ. Կարստին են, տե՛ս «Յուրարձան», նույն տեղում):

Այս կարգի բոլոր մոտեցումները, պարզ է, բխել են ոչ թե զուտ լեզվա-բանական քննությունից, այլ վերոհիշյալ կանխադրույթի արդյունք են եղել:

Միաժամանակ, Հ. Աճառյանն իբրև հմտագույն լեզվաբան, չէր կարող չզգալ նյութի թելադրանքի և կանխադրույթի հիշյալ հակասությունը, և նա հենց ելնելով նյութից ու փաստից է, որ հայերենում աքքադական փոխառու-թյունները երկու խմբի է բաժանում՝ ա) Ասորեստանի գոյության ժամանակ անցած և բ) Ասորեստանի կործանումից հետո խալդեերենի (նորխուրեերենի) միջոցով անցած²⁰, Աճառյանը հակված է առաջին խմբի մեջ տեսնել կենդանի աքքադեերենից կատարված անմիջական փոխառություններ: Եվ քանի որ, ըստ կանխադրույթի, աքքադեերենի կենդանի լեզու եղած ժամանակ մինչև մ.թ.ա. 7-րդ դարը հայերը իբր դեռևս Հայաստանում չէին, ուստի Աճառյանը մի կողմից ջանում է հավատարիմ մնալ կանխադրույթին, մյուս կողմից, լեզվա-բանական խղճի ու զգացողության թելադրանքով չի կարողանում լիովին մերժել կենդանի աքքադեերենից հայերենի մեջ կատարված անցումները: Եվ նա գրում է, թե այս վերջին կարգի փոխառություններ իրոք կատարվել են, բայց այն ժամանակ, երբ հայերը դեռ Հայաստան չէին եկել: «Այսպիսով, հայերենի մեջ մուտք գործեցին երկու կարգի ասուրերեն բառեր. մեկը նախքան Հայաստան մտնելը, երկրորդը Հայաստանում, խալդեերենի միջոցով: Միջոց չունենք որոշելու առաջմ, թե այդպիսի փոխառություններից որը ինչ կարգի է պատկանում»²¹:

Պարզ է, որ եթե Աճառյանը մի կողմ դնելով կլորության կանխադրույթը, հարցերը շատ ավելի պարզ ու առավել հավանական լուծում կստանային²²:

Հայերենում շումերական փոխառությունների հարցի կապակցությամբ երբեմն առաջ են քաշում նաև մի այլ կանխադրույթ. առվում է՝ եթե ընդու-նենք հայերենի տեղաբնիկ լինելը, միևնույն է, հայոց լեզվի տարածույթը չի շփվել շումերերենի տարածույթի հետ, որը մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերից սկսած եղել է Միջագետքի հարավում: Կարծում ենք այս աշխարհագրա-կան կանխադրույթն էլ պետք է մի կողմ դրվի լեզվական նյութը քննելիս: Դարձյալ՝ լեզվաբանը նյութից բխող իր եզրակացությունը պետք է հանի նաև այս ու հնարավոր այլ կանխադրույթներից անկախ: Եթե այդ եզրակացությու-նը հնարավոր է դարձնում հաստատել կամ ենթադրել անմիջական փոխառու-թյուններ, դրանից հետո նոր կարելի է մտածել, թե այն ինչ եղանակով, երբ ու որտեղ է կատարվել²³:

Շումերերեն-հայերեն բառային առնչությունների առաջին ընդարձակ

²⁰ Նույն տեղում, էջ 194—195:

²¹ Նույն տեղում, էջ 195:

²² Գ. Զահուկյանը, որ նախկինում ընդունում էր եկվորության կանխադրույթը (տե՛ս, օրի-նակ, նրա «Очерки по истории дописьменного периода армянского языка», Ереван, 1967, с. 38), լեզվական նյութի թելադրանքով և լեզվաբանի զգացողության շնորհիվ է, որ 1980 թ. գրեց, թե աքքադական բառերը հայերենի մեջ թափանցել են և՛ անմիջականորեն, և՛ միջնորդ լե-զուներից («Պատմա-բանասիր. հանդես», 1980 № 3, էջ 115), որ և հիմնավոր է: Շումերական փո-խառությունների մասին լեզվաբանն առաջմ նման կարծիք չի հայտնել:

²³ Տվյալ դեպքում, եթե հայերենում շումերական անմիջական փոխառություններ ընդունե-լը կամ ենթադրելը հնարավոր դիտվի, ապա չի կարելի տեսողաշտից հանել այն, որ նախ-քան մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերը շումերերենը խոսվել է ամբողջ Միջագետքում (նե-րառյալ հյուսիսը) կամ որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսում անգամ շումերերենը մա-սամբ գործածվել է Միջագետքի տարբեր մասերում և կամ այն, որ ըստ վկայութունների (օրի-նակ, Բեհիսթունի արձանագրության մեջ հայ Արաբալի ապստամբությունը Բաբելոնում կամ Խորենացու վկայությունը Բաբելոնում հայկական տարրի առկայության մասին և այլն) հայի՞ր եղել են նաև Միջագետքի հարավում:

ցանկը ներկայացրել է Հովհաննես Սաքրզյանը 1909 թ.²⁴ (նա այն ժամանակ տարածված սխալ ձևով շումերերենն անվանում էր աքքադական լեզու, թեև ցանկի վերնագրում ակադեմիկոս-ից հետո փակագծում նշել է՝ սումերերեն): Սաքրզյանը թեև փոքր կատակածով, բայց ընդունում էր եկվորություն կաղապարը, նա միաժամանակ հին սխալով շումերերենը համարում էր թուրանյան լեզվաընտանիքի անդամ, նաև Հայկական լեռնաշխարհի հնագույն լեզուներից, որ նույնպես սխալ է: Հ. Սաքրզյանը կազմել է շումերերեն-հայերեն բառային ընդհանրությունների մեծ ցանկ, որի մի մասն է հրապարակել: Այդ մասն ընդգրկում է 30 բառ: Մանրամասն նայելով այդ ցուցակը և ամենախիստ ընտրությունամբ 14-ը գտանք լիովին հավանական. դրանցից մի քանիսի մասին ստորև նշումներ կան, մյուսները բերված են հորվածի վերջում:

Յոգեֆ Կարստը մի ընդարձակ հորված է նվիրել աքքադեերենի և շումերերենի, ինչպես և մի քանի այլ լեզուների հետ հայերենի ունեցած բառային ու քերականական ընդհանրությունների հարցերին²⁵: Նա բերել է շումերահայկական բառային ընդհանրությունների մի ընդարձակ ցանկ՝ մոտ 200 բառ: Դրանցից խիստ ընտրություն կատարելով՝ շուրջ 20-ը շատ հավանական թվացին մեզ (բնականաբար, մենք այդ կարգի ստույգ որոշում հանել չենք կարող և գուցե Կարստի բերած բառացանկում հավանական լինելու նաև այլ թեկնածու բառեր լինեն):

Ստորև 3. Կարստի առաջարկներից մի երկուսի մասին կան նշումներ, 20 բառերից մնացածը թվարկված են վերջում:

Հ. Սաքրզյանի և Յ. Կարստի բերած ցուցակներում շատ բառեր նույնն են:

Դրանից հետո շումերահայկական բառային ընդհանրությունների մի քանի ցանկեր էլ են հրապարակվել, որոնցից է Գ. Ղափանցյանինը, որ նախկինում ալոց կողմից արված առաջարկների փոքր ցուցակ է²⁶ և Մ. Գավուկչյանինը: Վերջինիս կարծիքով հայերենում առնվազն 250 շումերերեն բառեր կան: Գավուկչյանը ներկայացրել է 2 ցանկ (առաջինը մուծված է 2-րդի մեջ)²⁷: Ստորև կներկայացնենք այդ ցանկից այն բառերը, որոնք մեր կարծիքով առավել հավանական թեկնածուներ են շումերական փոխառություններ լինելու:

Ձեռնարկելով հայերենում շումերերեն և աքքադեերեն փոխառությունների քննությունը՝ մենք ջանացել ենք մնալ լեզվաբանական հայեցակետի շրջանակում՝ մի կողմ դնելով բոլոր կարգի կանխադրությունները: Ներկա հորվածում առայժմ ներկայացնում ենք միայն շումերերեն-հայերեն բառային ընդհանրությունները, այն էլ միայն այնպիսիք, որոնք առավել հավանական թեկնածուներ են անմիջական փոխառություն լինելու (կամ ուղղակի հնարավոր չէ բացառել նրանց այդպիսի փոխառություն լինելը այժմ եղած ու մեզ մատչելի փաստերով):

Բերված ընդհանրությունների մի մասը նոր է (մեր առաջարկները),

²⁴ «Հանդես ամսօրյա», 1909, էջ 333—336: Ստորև Հ. Սաքրզյանի առաջարկների մասին խոսելիս հղում չենք տալիս, միշտ նկատի ունենալով այս աղբյուրը:

²⁵ J. J. Karst. Zur ethnischen Stellung der Armentier. — Յուշարձան: Գրական ժողովածու... Վիեննա, 1911, էջ 399—431: Այսուհետև, Կարստի առաջարկների մասին խոսելիս այլևս հղում չենք տալիս, միշտ նկատի ունենալով այս աղբյուրի 402—409 էջերը, որտեղ բառացանկը տրված է այբբենական կարգով:

²⁶ Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1945, էջ 139:

²⁷ Մ. Գավուկչյան, Հայ ժողովրդի ծագումը, Մոսկոն, 1982, էջ 10—17: Նշված է 100 բառ: Իր նախորդ գրքով («Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն», Բելյուս, 1973, էջ 46—56) հեղինակը դրել է այդ 100-ի կեսը (նա երկու դեպքում էլ նշում է իր օգտագործած բառարանները):

մյուս մասը առաջարկված է նախկինում, Սաքրզյանի և Կարստի կողմից, բայց մենք արել ենք որոշ լրացումներ կամ տվել մեր նոր մեկնաբանությունները, վերջում, ինչպես ասվեց, թվարկված են 2. Սաքրզյանի և 3. Կարստի մյուս առաջարկների մեջ եղած ամենահավանականները:

Հայ-շումերական համեմատությունները կատարելու համար հիմնականում օգտվել ենք Կ. Գաստոնիի՝ մեզ ծանոթ նորագույն բառարանից (ստորև բերված շումերերեն բառերի մոտ փակագծում նշել ենք այս բառարանի համապատասխան էջերը), ինչպես և այլ բառարաններից²⁸: Մեր ձեռքի տակ չէինք են նաև աքքադերենի նորագույն բառարաններ²⁹, որոնցում սովորաբար նշվում են աքքադերենին անցած շումերական բառերի նախօրինակները:

Որպես հայերեն բառերի համեմատության հիմք և հայերեն բառերի աղբյուրների հետ կատարված նախորդ համեմատությունների ու արված առաջարկների տեղեկատու օգտագործել ենք 2. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը»³⁰: Եվ այսպես, առաջարկում ենք շումերերեն այն բառերը, որոնք հայերենում հնարավոր է, որ անմիջական փոխառություններ լինեն: Սկզբում տրվում է հայերեն բառը, ապա՝ շումերերեն նախօրինակը:

Կամ, որից կամֆ, կամենալ, կամովին և այլն—շում. kam (51) «կամենալ, ցանկանալ»:

Առնչել են պահլավերեն kām «կամք, կամեցողություն» բառի հետ, որի սանսկր. և հին պարսկերենն է kāma, հինդ. kām «փափագ, նպատակ» և այլն, որ և ընդունում է 2. Աճառյանը (ԱՃ, 2, էջ 498): Ավելի հավանական է թվում, որ հնդկաիրանյան kama-ի և հայերեն կամ-ի նախօրինակը շումերերեն kam-ն է. հայերենն ու հնդիրանյանը կարող էին միմյանցից անկախ շումերերենից վերցնել այդ բառը:

Գրգիռ «բարկացնելը, հուզելը, կռիվ հրահրելը»—շում. gir-gir (17) «կայծակ»:

Առնչել են սանսկր. jāgar, հուն. ἐγείρειν «արթնացնել, գրգռել», ինչպես նաև սանսկր. gar «երգել, գովել», թուրք. girgir «մարդամոտ» և այլ բառերի հետ: Ձևով և մասամբ իմաստով (կայծակը՝ գրգռիչ), թերևս, ավելի հավանական է շումերական բառի հետ առնչելը:

Փակ—շում. pag (48) «փակել, փակ, բանտի, վանդակի մեջ դնել»:

Առնչել են պարսկ. bazang «սողնակ, նիզ», լատ. re-pag-ulum «սողնակ» բառերի հետ, հ. Բ. նախալեզվի spak արմատից սերած գերմ. sparren, հ. Բ. նախալ. sph...-ից սերած հուն. σφραγῶ «սեղմել, պնդել, գամել» բառերի, ինչպես և հ. Բ. նախալ. spaq, spag «կապել, կցել» արմատի հետ, որոնք մերժվել են Հյուբշմանի և Աճառյանի կողմից: 3. Կարստը առնչել է մոնղոլերեն buke-ի և կալմիկական buku, թունգուզական beki, թուրք. poko (բոկ), ճապոնական bogo «ուժով, ամուր, հաստատուն» բառերի հետ և այլն³¹: Առաջարկվել է նաև որպես փոխառություն աքքադերենից (Ն. Մկրտչյան), որտեղ

²⁸ Colman-Gabriel Gastony, Dictionnaire d'étimologie sumerienne et grammare comparée, Paris, 1975, Kärki Ilmari. Die Sprache der sumerischen Königsinschriften der frühalt babylonischen Zeit, Helsinki, 1967.

²⁹ Wolfram von Soden, Akkadisches Handwörterbuch, Band 1—3, Wiesbaden, 1965—1981, The Assyrian dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago. 1964—1980.

³⁰ 2. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1—4, Ե., 1971—1979. հղումները կատարում ենք էջում՝ բառարանի այս հրատարակությունը փակագծի մեջ նշելով, Աճ. հապավումով (նաև հատրեն ու էջը):

³¹ Մանրամասն տե՛ս 2. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4:

կա քազս «նեղ, փակվածք» բառը, այս առաջարկն ընդունել է Գ. Զահուկյանը³²: Մեզ թվում է, որ առավել հիմնավոր է ենթադրել, որ շումերերենից կատարված փոխառություն է (pag > փակ՝ գրեթե նույնիմաստ):

Կիր, որից կրել, զինակիր, խաչակիր և այլն—շում. gir (32) «տաքով գնալ»:

Առնչել են լատ. gero «կրել», արաբ jarr «չար, շարժարանք», լիտվ. keliu, պարսկ. kār, բասկերեն ekari և այլ բառերի հետ, նաև հ. ե. նախ. ag «ածել, վարել» արմատի հետ: Աճառյանը այդ առաջարկներից որևէ մեկը համոզիչ չի համարում (ԱՃ, հ. 2, էջ 594):

Խուլ «ականջը վնասված, լսող»—շում hul (19) «վնաս, վնասակար»:

Առնչել են հայերեն խօլ բառի հետ, պարս. zangula «զանգակ», հուն. χῶλός «կաղ», սանսկր. kharvās «խեղ, խեղանդամ», լատ. oc-culo «ծածկել», գերմ. hehlen «պարտկել» և մի շարք այլ բառերի հետ (ԱՃ, 2, էջ 415): Լ. Սաքբզյանն առնչել է շումերերենն gula «բուլ» բառի հետ:

Շէկ «կարմիր, դեղին», որից շիկնել, շիկաներ և այլն: շում. šeg (15) «հայելի, փայլուն իր»:

Առնչել են սանսկր. ॒शु॒च॒ «փայլել», ॒शु॒का «կարմիր», ॒शु॒वि॒t «փայլել», ॒शु॒वे॒ता «փայլուն, պայծառ, սպիտակ», իրանյան spaēta «սպիտակ», spiti—«պայծառ», հին սլ. světŭ «լույս» և այլն ու սրանց միջոցով հ. ե. նախալ. Կսօit «փայլել, փայլուն, սպիտակ» արմատի հետ, որ մերժված է (ԱՃ, 3, էջ 513): Առնչվել է նաև քրդերեն ښê «շեկ» բառի հետ: Արդյո՞ք քրդերեն, այսինքն՝ իրանյան այդ ձևը և հայերենի շեկ-ը շումերական վերոհիշյալ նույն բառից շեն սերում:

Փառ «ծածկույթ, քող, զգեստ»—շում. par (85) «ավազ»: Աճառյանը ենթադրել է խալդյան փոխառությունն (ԱՃ, 4, էջ 482), այսինքն՝ նորխուրեհերենից, թեև այդ լեզվում հայերեն փառ-ին համապատասխանող բառ չկա, որ և գիտեր Աճառյանը: Նա նշում է, որ վրացերեն փարվա «ծածկել պահել, պաշտպանել» բառը (և նույն շարքի մյուսները՝ փարալի «ծածկել») հայերեն փառ-ի հետ երրորդ աղբյուրից են ծագում, որը նրա կարծիքով խալդեերենը պետք է լինի» (թեկուզ նրանում նման բառ չկա պահպանված): Ավելի հիմնավոր չէ՞ արդյոք այդ երրորդ աղբյուրը համարել շումերերենը, որտեղ թեկուզ ինչ-որ չափով համապատասխանող բառ առկա է (ավազով ծածկում են, քողարկում):

Ուշ «դատողություն, միտք, բանականություն, ուշք», որից՝ ուշադիր, ապուշ և այլն, նաև՝ «ուշ, հիշելը, հուշիկ», ըստ այդմ՝ ուշացում, նուշագրություն և այլն—շում. uš (26) «դատողություն, բանականություն»:

Առնչել են իրանյան uš «ուշ, հասկացողություն, խելք, միտք» բառի հետ, որ պահլավերենում oš, hoš է, ն. պարս. hōš և hūš և այլն, որ և Աճառյանը ճիշտ է համարում (ԱՃ, 3, էջ 606) եղել է նաև շումերերենի uš «հասկացողություն» բառին առնչելու փորձ, որ Աճառյանը մերժում է (ն. տ.):

Շումերերենում կա uš (26) նաև «երկար, երկարատև, ուշացող» իմաստով: Նշանակում է, իմաստների տեսակետից հայերեն ուշ-ը ավելի մոտ է շումերերեն բառին, իրանյանը այս վերջին իմաստը շունի (թուրքերեն us-ը կարող է հայերենից փոխառված լինել): Թվում է ամենից հավանականն է

³² «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 4, էջ 97:

հայերեն ուշ-ը և իրանյան ԱՅ-ը համարել առանձին փոխառություններ շումե-
րերենից:

Ազարակ «հողամաս, դաշտ, արտ, գյուղական վայր»—շում. agâr (83)
«հողամաս, դաշտ, արտ, գյուղական վայր»:

Առաջինն առաջարկել է Հ. Սաքրզյանը, ապա՝ Յ. Կարստը, Աճառյանը
մերժել է (ԱՃ, 1, էջ 77), հետևյալ ենթադրությունն անելով. «...ազարակ բա-
ռը դառնում է փոխառություն, թերևս փոքրասիական մի որևէ կորած հընդ-
եվրոպական լեզվից» (ն. տ.):

Բնիկ հայերեն արտ բառը ծագել է հ. Ե. նախալեզվի ag'to արմատից, որը
ժառանգել են նաև հ. Ե. այլ լեզուներ, ինչպես հուն. ἄγρος, լատ. ager գերմ.
Acker և այլն: Հայերեն արտ-ը ըստ Ա. Մեյխի, հետևյալ զարգացումն է ապ-
րել՝ ag'to > ածր > արծ > արտ (ԱՃ, 1, 337), որ կարծում ենք, հիմնավոր է⁸³: Հ. Ե.
նախալեզուն իր ag'to-ն, անշուշտ, վերցրել է շումերերենից և ժառանգություն
թողել դուստր լեզուներին, այդ թվում հայերենին: Ոչինչ չի խանգարում լի-
ովին հնարավոր համարելու, որ դրանից հետո, արդեն առանձնացած հայերե-
նը ինքն է վերցրել շումերերենից նույն agar-ը և ավելի ուշ կցել իր -ակ մաս-
նիկը, ինչպես, որ ունենք՝ օրինակ, տեսակ, ճաշակ, քանակ և այլն: Ըստ Հ.
Աճառյանի հայերեն եղել է նաև ազարա ձևը (ԱՃ, 1, էջ 77):

Հայերեն ազար(ակ)-ը իմաստով ու ձևով շումերական agtâ-ի հետ նույ-
նանում է ավելի, քան որևէ լեզվի մեջ որևէ ճանապարհով մտած նրա տար-
բերակը: Նույնիսկ աքթադերենում շումերերենից փոխառյալ այս բառն ունի
agaru ձևը. թվում է ավելի քիչ հավանական է այն համարել հայերեն փոխա-
ռության աղբյուր: Խուտիերենում և նորխուտիերենում (ուրարտերենում) այդ
բառի որևէ տարբերակ չհայտնաբերեցինք: Իրանյան լեզուներում նույնպես
չկա: Հ. Աճառյանն այս ամենին տեղյակ լինելով ազարակ-ը շումերերենից
փոխառյալ լինելը բացառում է եվփորուսյան կանխադրույթի պատճառով և
դրանից հետո իր միակ հնարավոր ենթադրությունն է անում, որ հ. Ե. նախա-
լեզվից ag'to-ն ինչ-որ ձևով ժառանգություն է մնացել ինչ-որ մի փոքրա-
սիական չպահպանված հ. Ե. լեզվի, որից էլ անցել է հայերենին: Բայց եթե
մի կողմ ենք դնում կանխադրույթը, միակ հավանական աղբյուրը մնում է շու-
մերերենը. իրոք. ինչո՞ւ հայերեն ազար(ակ)-ը առնչել հ. Ե. նախալեզվի
ag'to-ից ժառանգություն մնացած մի ինչ-որ լեզվի անհայտ և ունեցող բառի
հետ (որ, համենայն դեպս, ազար նախնական ձևից բավական տարբեր կարող
էր լինել), երբ այդպիսի լեզու բնավ չկա էլ ասպարեզում և շատնչել նույն-
խմատտ և նույնաձև շումերական agât-ի հետ:

Ենթադրվել է նաև, որ ազարակ-ը իրանյան փոխառություն է, թեև նրա
որևէ ձևի նախօրինակը իրանյան հին լեզուներում չկա: Դարձյալ կանխադրույ-
թըն է գործում, հակառակ դեպքում ինչո՞ւ պետք է շումերերեն agât-ը թողած
ենթադրություն անել հայերեն բառը իրանյանում չեղած բառից փոխառյալ
լինելու մասին⁸⁴:

⁸³ Գ. Ղափանցյանը՝ հայերենը ոչ հնդեվրոպական, այլ խառնածին լեզու համարող իր տե-
սակետի դրոշմը մերժում է այս ստուգաբանությունը (Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմու-
թյուն, էջ 15, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1945, № 3—4, էջ 13—14), որևէ հիմնավորում չբերե-
լով:

⁸⁴ Շումերերեն այս բառը անցնելով հ. Ե. մայր լեզվին, սրանից էլ դուստրերին՝ հուե-
րենի agro ձևով անցել է շատ լեզուների, այդ թվում ուուսերենին, որից էլ հայերենին (ազր-
կաններ, ազրեճ և այլն)՝ այս էլ արդեն երրորդ անգամ:

ինչ վերաբերում է վրացերենի ազարակի, թուրքերեն ekrek, թաթարերեն egerek բառերին, ապա նրանք ակնհայտորեն փոխառություններ են հայերենից:

Պատ(ում), որից պատմել, պատմություն և այլն— շում. pad (48) «պատում, պատմել, հայհոյել, արտասանել, երգվել»:

Առաջինը Յ. Կարստն է առնչել շումերերեն pa, paa, pad «ասել, հայտարարել» բառի հետ, որ, կարծում ենք վերը բերված նույն pad-ը պետք է լինի (Կարստի ունեցած աղբյուրն այլ է եղել, որ, հավանաբար, մեր ունեցած աղբյուրի համեմատ փոքր-ինչ տարբեր կերպ է ներկայացրել նույն բառը):

Ուրիշներն առնչել են պատգամ բառի հետ (որն իրանական փոխառություն է) կամ՝ սանսկր. pratimā, իրանական palmūdan «չափել», ինչպես և պարս. bād, հինդ. bāt «բառ» ձևերի հետ (ԱՃ. 4, էջ 51):

Իմաստի և ձևի տեսակետից ամենահավանականը շումերական փոխառությունն է:

Պատ «որմ, պատ, շրջան, պատելը, պարիսպ», որից՝ պատել, պատան(f), պատյան, ցանկապատ, դրսի պատ և այլն, նաև տարբերակը փաթ, որից փաթաթել, փաթաթան և այլն—շում. bad, bat «որմ, պատ, պատելը»:

Հայերեն պատ շում. bad, bat ընդհանրությունն առաջինը առաջարկել է Հ. Սաքրզյանը, ապա Յ. Կարստը: Պատ-ը փաթ-ի հետ առաջինն առնչել է, կարծեմ, Հ. Աճառյանը (ԱՃ, 4, էջ 33, 468—469): Նա սակայն մերժում է պատ-ն իբրև շումերական փոխառություն:

Պատ-ը առնչել են իրանյան (գենդ). bād «շրջապատել», ն. պարս. bādān «շինություն, հաստատություն», առանձին պալտիպատ-ը պարս. bādubid «սնոտի, անօգուտ» բառի հետ: Փորձ է եղել բխեցնելու հ. ե. նախալեզվի pat, pad «ընկնել, պատահել, թռչել» արմատներից և այլն (ԱՃ, 4, էջ 33). բոլորն անհամոզիչ: Եղած հնարավոր բոլոր լեզուների տարբերակներից ձևով և իմաստով հայերեն պատ (փաթ)-ի փոխառության ամենից հավանական թեկնածուն շումերերենի bad (bat)-ն է, այն էլ անմիջական փոխառության թեկնածու, քանի որ հնարավոր միջնորդ լեզուները կամ շունեն այդ բառը, կամ, եթե ունեն, դրանք հայերենին իմաստով ավելի անհամապատասխան են, քան շումերերեն բնօրինակը: Աքքադերենն ունի Patu «սահման, շրջապատ» շումերերենից փոխառյալ բառը. ինչպես տեսնում ենք, իմաստով շումերերենը հայերեն բառի շատ ավելի հավանական աղբյուր է:

Յ. Կարստի բերած ուլգուրերեն böt, büt, but «ցանկապատ» բառի համապատասխանությունը շումերերենի հիշյալ բառի հետ շումերա-թուրանյան՝ սովորաբար նշվող համապատասխանություններից է, որ մեզ համար առայժմ անբացատրելի է մնում:

Գ. Ղափանցյանը համաձայնելով, որ հայերեն պատ-ը շումերական bad-ն է, նաև կատկած է հայտնում. «եթե սա չի ծագել պատեմ բայից» (տե՛ս նրա «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Ե., 1945, էջ 139), բայց պատեմ բառի արմատը նույն պատ-ն է, ինչպես իրավացիորեն նշում է Աճառյանը (ԱՃ, 4, էջ 32):

Գն(ալ) «գնալ, առաջ շարժվել, երթալ», արմատի նախնական ձևը պետք է եղած լինի գին, որից գին+ալ>գնալ—շում. gin (35) «գնալ»: Առաջինն առաջարկել է Հ. Սաքրզյանը, ապա՝ Յ. Կարստը:

Ուրիշներն առնչել են սանսկր. gam «գնալ», իրանյան (գենդ.) zgā (գնալ, հոսել), հունարեն (αἰθέρα: «գնալ, գալ», հին սլավ. gnati «մղել, վարել» բառերի հետ: Փորձ է արվել նաև բխեցնելու հ. ե. նախալեզվի ga,

gha արմատից, որ Աճառյանը չի ընդունում: Նշվել է առնչությունն աքքադերենն *gin* բառի հետ, որ իբր նշանակել է զնալ, հղել. Վ. Զոդենի աքքադերենի վերոհիշյալ նորագույն ու ամենալրիվ բառարանը այդպիսի բառ չունի:

Գարձյալ՝ փոխառություն ամենահավանական թեկնածուն մնում է շումերերենի վերոհիշյալ բառը:

Նշենք նաև, որ իբրև աքքադական ծագում ունեցող հայերեն բառեր նըշվող կմախ(f)-ը, կշիո-ը, անագ-ը ավելի հիմնավոր է թվում շումերական փոխառություններ համարելը (համեմատել հայերեն այս բառերի ձևն ու իմաստը շումերերեն և աքքադերեն՝ վերը բերված համապատասխան բառերի հետ): Այնուհետև, անոթ և գագաթ բառերի համար էլ ավելի հավանական աղբյուր է թվում շումերերենը, քան աքքադերենը. հմտ. անօթ—շում. unut «աման», աքք. unutu «աման», գագաթն—շում. gaggud «գլուխ», աքք. kakkadu, gaggadu:

Ստորև թվարկում ենք նաև Լ. Սաքրզյանի, ապա Յ. Կարստի բառացանկերից մեր հանած հայ-շումերերեն այն համապատասխանությունները, որոնք մեզ առավել հավանական շումերական անմիջական փոխառություններ են ներկայանում: Քանի որ Կարստն իր ցանկում ընդգրկել է Սաքրզյանի առաջարկած գրեթե բոլոր բառերը, ուստի չկրկնելու համար Կարստի ցուցակից բերում ենք միայն այն առավել հավանական փոխառությունները, որոնք չկան Սաքրզյանի ցանկում:

Լ. Սաքրզյանի բառացանկից. շում aba «հետո»—հայ. ապա «հետո», շ. al-al «չար ոգի», հ. ալ «չար ոգի», շ. anag «անագ, կապար»,—հ. անագ, շ. arikgilim «բարձրակրունք թռչուն»—հ. արագիլ (Լ. Աճառյանը կցում է հունարեն *πελαργίς* «արագիլ» բառին՝ մերժելով մյուս բոլոր առաջարկները. սակայն Սաքրզյանի առաջարկը շատ ավելի հավանական է), շ. bar «փայլել»—հ. վառ (ել), շ. tisgu «Իշտար աստվածուհի»—հ. դշխո, շ. quski «ոսկի»—հ. ոսկի (այս առաջարկը արվել է նաև Սաքրզյանից առաջ. Աճ, Յ, էջ 566), շ. zizi «ճիճու»—հ. ճիճու (ճճի) «որդ», շ. udu «ոչխար»—հ. օդի (ալդի) «ոչխար»:

Յ. Կարստի բառացանկից. շում mud, mut «մութ, մթնել, մթնություն»—հայ. մութ, շ. nanga «նահանգ, շրջան»—հայ. նահանգ, շ. pap «պապ, մեծ հայր»—հայ. պապ, շ. sag «գլուխ, գլխավոր»—հ. սէգ:

Այժմ էլ բերում ենք Մ. Գավուկչյանի բառացանկից քաղված այն բառերը, որոնք առավել մեծ իրավունք ունեն շումերական փոխառություններ համարվելու. շում. ab, ap «ծով»—հայ. ափ, շ. dab, tab «առկայծել, բոցավառվել»—հ. տապ, «տաքություն», շ. gašan «ուժեղ, փիթխարի»—հ. գագան, շ. gutabba «գործ թելի»—հ. կտավ, շ. mahur «կրակ բորբոքել»—հ. մոխիր, շ. tu «ծնել, սերնդագործել»—հ. ձու, շ. zag «աջ կողմ»—հ. ձախ:

Յ. Կարստը փորձել է շումերերենից հայերենին անցած բառերի մեջ հընչյունաբանական օրինաչափություններ նշել, այդպիսի մի այլ կարգի փորձ նրանից առաջ արել է Լ. Սաքրզյանը: Երկուսն էլ համեմատական լեզվաբանության այժմյան մակարդակի տեսակետից մեծ մասամբ անհամոզիչ են: Մենք առայժմ այդպիսի փորձ չենք անում, թեև դրա համար ինչ-որ հիմք կարծես թե, կա. օրինակ, շումերերեն բառերում որոշ դիրք ունեցող պայթական ձայներների (b, d, g) դիմաց հայերենում խուլերի (պ, տ, կ) առկայություն, ինչպես և որոշ դիրքերում էլ շումերերեն խուլերի (օրինակ, p) դիմաց հայերեն շնչեղ խուլերի (փ) առկայություն, որոշ դեպքերում էլ շումերերեն և հայերեն պայթականների համապատասխանություն և կամ մի շարք դեպքերում b—վ (i) համապատասխանություններ:

Կուզեինք հիշեցնել, որ եթե հ. ե. նախալեզվից հայերենի ժառանգած բառերի անցումային հնչյունափոխությունները մեծ մասամբ բավական հետևողական օրինաչափություն ունեն, ապա հին ու նոր փոխառությունների մեջ անցումային հնչյունափոխության օրինաչափություններն, առհասարակ, թույլ են արտահայտված կամ այդպիսիք չկան: Օրինակ, ամենից ավելի մեծաքանակ պահպանված հայերեն ընդհանրությունների մեջ կարելի է նշել անցումային հնչյունափոխությունների բազում անօրինաչափություններ, իրարամերժություններ, որոնք բնավ չեն խանգարում այդ կարգի փոխառությունների պահպանված աղբյուրը հավաստի համարելու (քանի որ չկա խոչընդոտող կանխադրույթ): Նույնը պետք է վերաբերի աքքադական և շումերական փոխառություններին, թեև այս դեպքում էլ թույլ արտահայտված որոշ օրինաչափություններ, ինչպես առվեց, կարելի է նշել: Ի դեպ, այստեղ առաջանում է հայերենից կատարված անցումների հարց³⁵ ևս, անցումներ, որոնց հնչյունափոխությունն առ բնույթ պետք է ունեցած լինի. մինչդեռ հայերենի և հնագույն ու հին լեզուների միջև եղած գրեթե բոլոր ընդհանրությունների դեպքում մի շատաճառաբանված սովորույթով հայերենը դիտվում է սոսկ իբրև ստացող լեզու, և չեն տարբերակվում ստացման ու տրման հնչյունափոխությունները, որի հետևանքով շատանում են հնչյունաբանական անօրինաչափությունները:

Շումերերենից անմիջականորեն հայերենին անցած լինելու վերը բերված բոլոր հավանական թեկնածու բառերի մի փոքր մասը ննարավոր է, որ նախորդ առաջարկողների, ինչպես և մեր սխալմունքի արդյունք լինի, բայց անկասկած է, որ նրանց մի զգալի մասն էլ հիմնավոր է, համենայն դեպս, անհնար է այդ մի մասին վերաբերող առաջարկներն ու ենթադրությունները հերքել ներկայումս ասպարեզում եղած նյութով:

Ննարավոր է նաև, որ շումերերենից իրոք փոխառյալ լինեն Հ. Սաքքայանի, Յ. Կարստի և ուրիշների, ինչպես և մեր քաղած շումերերեն-հայերեն մի շարք համապատասխանություններ, որոնք մեզ կասկածելի են թվացել ու այդ պատճառով այստեղ չեն նշվել: Ննարավոր է, որ շումերերեն այլ բառեր էլ այսօր հնչում են հայերենում, որոնք բնօրինակից շատ հետացած լինելու պատճառով առայժմ իբրև այդպիսիք ոչ ոքի կողմից չեն նշվել:

Մի բան, կարծում ենք, հավաստի պետք է համարել, այն, որ շումերերեն-հայերեն բազմաթիվ, հաճախ շատ ազնահայտ համապատասխանությունները անուրանալի են դարձնում ընդհանրապես բառային անմիջական անցումները շումերերենից հայերեն: Իսկ դա նշանակում է կենդանի շումերերենի և հայերենի շփումներ, որոնք կարող էին տեղի ունենալ, թեևա, մ.թ.ա. 3-րդ հազարամյակում:

Р. А. ИШХАНЫЯН—Вопрос о шумерских словах в армянском языке.—Армянское нагорье и Месопотамия как географические единичи имели общую границу, протяженностью около 300 км. Армянское население имело также в самой древней Месопотамии. Шумерский язык с середины 3-го тыс. до н. э. (до 2-го тыс. до н. э.) был разговорным главным образом на юге Месопотамии. Ранее на нем говорили почти на всей территории Месопотамии. О наличии в армянском языке шумерских слов писали Ов. Сагизян, Иоз. Карст и др. Исследованию шумерских, а также аккадских слов в армянской лексике с точки зрения заимства-

³⁵ Առայժմ չենք փորձում անդրադառնալ հայերենից շրջակա հնագույն ու հին լեզուների անցած բառերի հարցին, թեև այդպիսի հարց էլ կա, անցումների օրինակներ էլ կան. մի քանիօր րերի ենք մեր որոշ հոգվածներում (տե՛ս, օրինակ, «Երևանի համալսարան», 1963, № 3):

ний, в том числе непосредственных, препятствовала укоренившаяся в арменистике гипотеза—формула, согласно которой носители индоевропейского армянского (праармянского) языка проникли на Армянское нагорье в VI веке до н. э. и поэтому армянский язык будто не соприкасался с ареалами шумерского и аккадского языков. Автор настоящей статьи стремится независимо от какой-либо исторической гипотезы, чисто лингвистически выяснить есть ли в армянском языке слова (гlossы), непосредственно заимствованные из шумерского? Приведены и комментированы те из предложенных Ов. Сагизяном, Иоз. Карстом, автором этой статьи и другими слов, которые есть основание считать непосредственными заимствованиями из шумерского языка в армянский (другие предложенные этимологии приведенных слов менее убедительны, или вовсе неприемлемы). В числе приведенных следующие слова: *աղարակ* (*աղար+ակ*) «земельный участок, поле, нива, сельское место»—шум. *agáğ* «земельный участок, поле, нива, сельское место»; *կամ* (в сл. *կամեմեմ*, *կամք* и др.) «хотеть, желание, воля»—ш. *kam* «хотеть, желать»; *փակ* «закрывать, запереть, замкнуть»—ш. *pağ* «запереть, заточить»; *ուշ* «рассудок, разум, внимание», а также «поздно, опоздание»—ш. *uš* «рассудок, разум, память», а также: «долгий, поздний»; *ապա* «после, далее»—ш. *aba* «после»; *արագիլ* «аист»—ш. *arigilim* «длинноногая птица»; *աղբ* «овца»—ш. *udu* «овца»; *մութ* «темно, темнота»—ш. *tud*, *put* «темно, темнота»; *նահանգ* «область, район»—ш. *paṅga* «область, район»; *սիս* «дед»—ш. *rap* «дед»; *սնոթ* «сосуд, посуда»—ш. *unut* «посуда» и др.